

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ԿՍՑՅԵՐԱԿԱՆ ՄԵՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ժամանցին Մոսկա ապրիլի 1-ին:

ՎԵՀԱՓ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ մարտի 17-ին ժամանեց Թիֆլիս, ուր և իջած է առաջնորդարանում:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Բարձրագույն հրամանով Կովկասի քաղաքացիական մասի Կապարչապետին իրաւունք է տրոււմ բոլոր այն քաղաքային խորհրդարաններում և լիազօրների ժողովներում, որոնց կազմը պէտք է նորոգման ենթարկուի այս տարի, շարագնել քաղաքային ոչ-քրիստոնեակ իրաւասուների և լիազօրների թիւը՝ քաղաչին կանոնադրութեան 14-րդ յօդուածով որոշած նորմայից աւելի՝ անկախ քաղաքում ապրող քրիստոնեաների թւից:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Կովկասեան ջրերի տեսուչ (инспекторъ водъ на Кавказѣ) նշանակած է սրտոկ. սովէրնիկ Ն. Ա. Պետրով, որը վերջին երկու տարիներս Անդրկասպեան երկրի Թուրքեստանեան շրջանում (օբլաստի) ջրաբաշխութեան աւագ պաշտօնեան էր:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՌՈՒՍՏԱՅԱՐԿԱՆ և աշխանց դիմնազներին ու պրոպիմնազների աշակերտների քննութեան վերաբերեալ կանոնների § 36 փոխել է այս կերպ. մանկավարժական ժողովներին իրաւունք է տրոււմ առանց քննութեան փոխադրել բարձր աստիճան 1) նոցա, որոնք միջին թւով իւրաքանչիւր առարկայից 3 թւանշանից պակաս չունին տարեկան և 4 թւանշանից պակաս ուսերէնից, լատիներէնից, չռնարէնից և մաթեմատիկայից. 2) նոցա, որոնք, առհասարակ բաւարար թւանշաններ ունենալով տարեկան, չեն կարող քննութիւններին գալ, կատարելագէտ չարդելի ճանաչւած պարճառներով:

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՌՈՒՍՏԱՅՈՒՄ: Պարիզի ցուցահանդէսի համար պատրաստուած սրտախորիկական տեղեկութիւններից երևում է հետեւեալը. քաղաքային դպրոցներ 1872 թ-ի կանոնադրութեամբ, ալ և քառասական (3 դասարանեան), եկեղեցական-ծխական երկասարանեան

Դպրոցների թիւն է 1.900 (որից 250-ը սրբազան սինոդի կառավարութեան ներքոյ): Սկզբնական քաղաքային, գիւղական, զեմստուային, մի-շաստարանեան եկեղեց.-ծխական, մի-շաստարանեան մի-նխորական, երրորդ կարգի մասնաւոր և այլ ստորին դպրոցների թիւը նաանում է 80 նազարի 4 միլիոն աշակերտներով: Տղայոց կլասիկական զիննազներ 191, տղայոց պրոգրիմնազներ 53, Ռէալ դպրոցներ 115: Աշջկանց զիննազներ և պրոգրիմնազներ կրթական միւնիստրութեան ներքոյ 346, նոյնը կայսրուհի Մարիայի հիմնարկութեանց վարչութեան ներքոյ 346, նոյնը սրբ. սինոդի վարչութեան ներքոյ (թեմական դպրոցներ) 60: Միջնակարգ զիննորական կրթական դպրոցների թիւ է 30:

ՅԻՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ անունով, որպէս չափոնի է արդէն մեր ընթերցողներին, մի կապակցութիւն է կազմել Արեւմտեան Ներսիսյան հայ ուսանողների միջև, որ արտալուրուում է տարեկան համագումար ժողովներով Ներսիսյան քաղաքներից մէկն ու մէկում: Միութիւնը գլուխ է բերած 1897-ին և ունեցել է ցայժմ երկու համագումար՝ Հայդելբերգում 1897-ին և 1899-ին, իւրաքանչիւր անգամ 4-4 օր տևողութեամբ: Վերջին համագումարի մէջ վճռուել էր տպել «Տեղեկագիր Ներսիսյան հայ ուսանողական միութեան», որի մէջ տեղեկութիւններ պիտի տպւէին թէ համաժողովների և թէ տեղական հայ ուսանողական ընկերութիւնների մասին, այլ և որպէս սրատիտրիկական տեղեկութիւններ հայ ուսանողների մասին: Մեզ ուղարկած է առաջին «Տեղեկագիրը», որ կազմել է Միութեան կարգադիր շանճնաժողովը: Դա մի բրոշիւր է արեւելեան հայոց լեզուով, 22 էջից, որի, կարող ենք ասել, միակ պակասութիւնը գրքուկի լեզուի արդէն չափազանց անհմուտ խմբագրութիւնն է:

Տեղեկագրի տւած տեղեկութիւնները գոհացուցիչ են: Տեղեկական գրական և գանձարանական ընկերութիւններ ունին Բերլինի և Վալպրիգի հայ ուսանողները, բայց դասախօսութիւններ ունեցել են նաև հայ ուսանողները Միւնխէնում և Յիւրիխում: Առաջ են բերած չիչեալ քաղաքներում հալերէն կարդացած դասախօսութիւնների ցանկը: ապա տրուում են սրատիտրիկական տեղեկութիւններ հայ ուսանողների մասին Ներսիսյան, այն ձևով, ինչպէս այդ արած էր Մուրճի մէջ 1897 թ-ին, միայն թէ Տեղեկագրի մէջ ուսանողների անուններ չկան, որ, հարկաւ, կարևոր պակասութիւն չէ: Տեղեկութիւնները վերբերում են ուսանողներին՝ Բերլինի (26 ուս.), Բրեսլաւի (6), Դրեզդէնի (2), Լաւոյցի (11), Հալլէի (3), Միւնխէնի (8), Ֆրանկֆուրտի (3), Լինաւի (1), Մոնպելիէի (10), Նանսիի (9), Պարիզի (130 հոգուց 50-ի մասին), Լոզանի (6), ժընևի (18), Յիւրիխի (7),

Պաւիպի (1), Լիէժի (4). ընդամէնը տեղեկութիւններ որոած են 230 հաշուաւորներին մասին քիչեալ քաղաքներում (հաշի առնելով Պարիզի ուսանողներէց միայն 50 հոգի): Սրտափոփրկական տեղեկութիւնները շեռ նս լրիակաբար չեն. բաց անկասկած է որ Միուծեանը կ'աջողուի այդ պակասը լրացնել:

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆՆԱՆ օրիորդաց Դպրոցի համար (Թիֆլ.) Վանքի մար կեղեկացու, Մուշու Ս. Դէորդ և Բեդէհեմ կեղեկցիներին ծխականների ընտրած 4-ական պարգաժաւորների յաղովը, թեմակալ առաջնորդի նախագահութեամբ, ընտրեց հոգաբարձուներ՝ Աբգար Յովհաննիսեանին, բժշկ. Ա. Ս. Անանեանցին, իշխ. Ալ. Բեհբուղեանին և բժշկ. Վուլիջանեանին:

ԱԽԱԼՔԱԼԱԿԻ ԱՐԿԱԾԱԼՆԵՐԻ մասին, տեղական օտարկանութեան կազմած ցուցակը հետեւեալն է.

Գիւղերի անունները	Տների թիւը	Քանդած տներ.	Բնակիչներ.	Մեռածներ.	Անասուններ.	Կորորած անասուն.
1. Մերենլա	130	117	1048	86	2158	692
2. Բեժանո (Ճանճշալ)	125	117	1160	48	2062	160
3. Էխոփլա	72	69	654	9	1323	160
4. Էխոփլու Սամսար	54	51	510	27	1810	319
5. Բալիս	48	45	440	»	1328	141
6. Ազարեխթ	102	40	1230	»	298	34
7. Թոկ-Սամսար	50	39	496	46	1010	614
8. Ականա	66	31	489	14	608	69
9. Տըկնա	21	19	171	3	221	22
10. Լոմարուրս	26	18	312	»	696	16
11. Մաջագ'ա	78	17	740	1	500	49
12. Ալաթուման	48	15	422	2	393	4
13. Ղաշօ (Գողալար)	38	12	470	1	6	4
14. Չխարուլա	38	11	416	»	206	»
15. Սիւրք	10	10	120	»	271	29
16. Բարալթ	130	8	1038	»	»	»
17. Օլաւերթ	80	8	652	3	359	33
18. Կորխ	84	7	793	»	118	14
19. Բուղաչէն	50	5	466	»	2	1
20. Արագովա	128	5	960	1	110	12
21. Գոմ (Գոման)	110	4	920	3	30	»
22. Բալանթա	30	4	252	»	74	2

23. Բզաւելի	45	3	480	»	73	9
24. Աբուլ	89	2	914	»	46	5
25. Խուլղուժ	51	2	451	1	100	11
26. Խանգօ	130	2	1109	3	»	»
27. Կաճօ	32	1	390	»	»	»
28. Կոթեւլիա	78	1	381	»	37	8

1943 664 17784 248 15140 2427

ԱՐԱՆՔԱԼԱԿԻ ԳԱՒԱՌԻ ԱՐԿԱՄԵԱԼՆԵՐԻ օգտին Օգնութեան զլիսաւոր կոմիտէի մէջ ստացուել է ց1-ն ապրիլի 207.773 ո. Դրամով:

ՄԻԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ 200 ԱՄԵԱԿԸ. «Բազմազէպ» ամսագիրը լիշեցնում է (1900 № 4) որ գալ 1901 թւականի սեպտեմբերի 8-ին (նոր տոմարով) լրանում է 200 տարին ալն օրից, երբ Մխիթարեան միաբանութիւնների մեծ հիմնադիրը հիմը Դրեց Կ. Պոլսի մէջ իւր անունը կրող հաստատութեան, որ չնորոշ տեղափոխեց Մեթոնի և վերջը՝ Վերետիկի Սուրբ Ղազար կղզին: Վերետիկի Մխիթարեան միաբանութիւնը կատարելու է չորեքնական հանդէս լիշեալ 200-ամեակի օրը և ալք առիթով հրատարակելու է ութ գիրք, որ հետեւեալներն են. 1) Հալապարում գիրք, որ է Հ. Ղ. Ալիշանի հաւաքած Հատուածներ մեր ճեղինակների պատմութիւններից, ժամանակագրական կարգով, մինչև 17-րդ դարը, համառօտ աշխարհարար ծանօթութիւններով. 2) Լիակատար բնագրութիւն Մխիթարաբրատօր, պատկերազարդ. 3) Մխիթարեան միաբանութեան 200-ամեակ գործունէութիւնն ու նշանաւոր գործիչները, պատկերազարդ. 4) Համառօտ պատմութիւն Մխիթարի կեանքի և գործերի. 5), 6) Մխիթարի և իւր միաբանութեան գործունէութեան պատմութիւնը՝ Ֆրանսերէն, իտալերէն լեզուներով. 7) Մխիթարի գրութիւններից հատուածներ, անդլիերէն թարգմանութեամբ. 8) Պատկերազարդ մեծադիր թերթ՝ կատարելիք հանդիսին վերաբերեալ, և ալն:

Միաբանութիւնը ծրագրել է չորեքնական տօնին համազգային կերպարանք տալ, և առ ալք կարգադիր չանձնածորով է կազմաւծ:

Միտքը չաջող է և ճիշդ: Մխիթար Սերաստացու նշանակութիւնը միաբանական շրջանակից շատ աւելի լալն է, քան համազգային է: Բաւց չըպիտի մոռանալ, որ որքան և ամբողջ ազգը պարտաւոր է լիշել Մխիթարին և իւր գործը, նորնքան էլ ճիշդ է որ ալք տօնը չըպիտի կապուի ներկալիս Մխիթարեան միաբանութիւնների հետ, որոնց ուղղութեան խրախուսանք չըպիտի լինի Մխիթարին տօնելը:

ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.

—Ալէքսանդր Մանթաշեան նւիրեց 50.000 ուսրլի թիֆլիսի

առևտրական շատակառուցի վարչութեան, ահա որ այդ գումարը գործադրելի թիֆլիսի առևտուրի և մանուֆակտուրայի կոմիտէի ծրագրած այն առևտրական սորորին շարքին, որի նպատակը պիտի լինի առևտրական սորորին ծառայողներ կրթելը (սորորին գործակառուներ, հաշուապահներ և այլն. չըշփոթել թիֆլիսում հիմնուղ Առևտրական միջնակարգ շարքին հետ, որ բացելու է սեպտեմբերից)։ Առևտրականների ժողովը վճռեց ծրագրած և դեռ ևս թուղուութեան կարօտ նոր շարքին չարկացնել «Ալ. Մանթաշեան շարք» անունը։

— Խուշի էլիբեգեան (Ագուլեցի, վաճառական Երևանում) Եւրոպեաց 500 ուսուցիչ Երևանի թեմական շարքին, ի իշխարակ իւր նոր հանգուցեալ ամուսնի։

ԻՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ։ Մենք ստացել ենք հետեւեալ նամակը.

«Միծարգոյ պ. Խմբագիր.

«Թող տէք ինչքան Զեք պատական ամսագրի միջոցով լազրենել իմ անկեղծ շնորհակալութիւնն այն ամենքին, որոնք իմ գրականական գործունէութեան 10-ամեակի առիթով պատուեցին ինձ իրանց շնորհակալական հեռագրներով, ողջունական նամակներով, նէր ուշարկած աշխարհութիւններով, հրատարակութիւններով և արժէքաւոր ընծաներով։ Մանաւանդ ուրախալի էք ինձ տեսնել, որ ուշարուութեան և համակրանքի այդ ցոյցերն երևան են գալիս հայ հասարակութեան բազմազան խաւերից, որ ազգային հիմնարկութիւններ, բարեգործական հաստատութիւններ, պարբերական հրատարակութիւններ, մատենադրներ, ուսանող սերնդի ներկայացուցիչներ, կանաչք, բնական գործիչներ, առևտրական շատակառու ամսնքն էլ անպէս համասիրտ և համակամ արձագանք տւին իմ համեստ գրական փօնին։ 3-ուսարի 22-ն ընդ միշտ թանկագին և զիշարակելի կը մնալ ինձ համար. այդպիսի օրեր լաճախ չեն վիճակուում գրական մշակներին, գրչի մարդկանց... Վէպի նւաստս ցոյց տւած այդ սիրաշար տրամադրութիւնը հայ հասարակութեան կողմից, որի վերաբերմամբ ես միշտ սոգորւած եմ եղել անկեղծ և ջերմ համակրանքի զգացումներով, նոր ուժ և եռանդ է ներշնչում ինձ նաև ապագայում շարունակելու իմ գործունէութիւնը, կարողացածիս չափ ծանօթացնելու ուսու հասարակութիւնը հայ ժողովրդի ցաւերին, ու կարիքներին, նրա քաղաքակրթական հակումներին, նրա բուն ազգային բնակիչի և հաւատում եմ, որ վաղ թէ ուշ կը գալ մի օր, երբ իսպառ կը փարատւին ուսու հասարակութեան կանխակալ և նախապաշար կարծիքներն հալերի մասին և այդ հասարակութիւնը միանգամայն արդար ու զթասիրտ, անաչառ, համ-

բերող և եղբայրասիրական ոգով կը վերաբերւի շէպի հաշ ժողովուրդը-
Յանկանք, որ շուտ հասնի այդ օրը...

«Անկեղծ չարգանքով Խաչի վեհաժողովի»

«26 Յունւարի 1900 թ.

«Մոսկուա»

ՏԱՃԿԱՆՆԵՐԻՆ:

—Կ. Պոլսի Հայոց Ուսումնական Խորհուրդը վճռեց Ազգ-
կենտր. վարժարանի մէջ «Մանկավարժական գոսպիտուսութիւնները» հաս-
տատուել, որ պիտի սկսին փետրու. 27-ից և աւարտեն յու-
լիսի վերջը: Ուսուցչութեան ընտրելիները, երկու սեւից, և վկայ-
ւած ուսուցիչներէն նոքա, որոնք կը փափագեն իրենց վկայականի-
ատրիճանը բարձրացնել՝ պարտաւոր են ունկնդիր լինել մանկավար-
ժական դասերին:

Յոյս կալ թէ առաջիկայ սեպտեմբերին կը հաստատուի բուն
վարժապետանոցը:

—Սանասարեան վարժարանի Պոլսի խնամակալութեան ան-
դամներէն Յովհ. Նուրեանի մտնովը մի անդամի պակասած տեղի հա-
մար հիմնական կանոնադրութեան տրամադրութեան համաձայն եր-
կու ընտրելի ներկայացուցան Ս. Պատրիարքին, որը նոցա միջից
անդամ կարգելու Գէորգ Ասլանեանին:

—Երուսաղէմի Հայոց պատրիարքական փոխանորդ կարգուած է
Գէորգեան Տ. Ներսէս եպիսկոպոսը (անդամ Ս. Յակոբեանց միաբա-
նութեան, նախկին առաջնորդ Ռոդոստոյի), ի տեղի հանդուցեալ
Երեմիա եպիսկոպոսի:

—Էրզրումի մէջ բազմաթիւ շէպեր և նշանակաւոր լուսաւարներ
ընդունելու հալ-լուսաւորչականներու կողմից:

—Եօլան-Օլուքի հայերի մէջ դաւանափոխական շարժում է սկսուած:

—Սփ կաթողիկոսական ընտրութիւնները ներկայումս դեռ ևս չա-
րունակում են Աշանալում: Աշանալի նահանգապետը թող չըրուեց
կ. Պոլսի Հայոց պատրիարքի պատիրակ Սահակ եպիսկ. Յապալեա-
նին նախագահելու ընտրողական ժողովին, այլ թող տրեց նորան-
միայն որպէս ընտրութեան մասնակցողի:

—Օրմանեանի հրոժարականը: Պատրիարք Օրմանեանը հրոժարա-
կան թուղթ տեց Բ. Կրան: Հրոժարականը դեռ ևս ընդունուած
չէ: Այդ հրոժարականը մեկնում է գլխաւորապէս նրանով, որ Սփ
կաթողիկոսական ընտրութիւններին Պատրիարքի պատիրակ Խա-
պալեան Սահակ եպիսկոպոսին, հակառակ նախնական կանոններէ,
թող չըտրուեց ընտրուական ժողովին նախագահելու: Տաճիկ կառա-
վարութեան այդ վարժունքը ցոյց է տալիս, որ նա վճռել է Սփ

կաթողիկոսութիւնը շուրս բերել Կ. Պոլսի Հայոց պատրիարքի վարչական իրաւասութեան շրջանակից:

ԳԵՐՄԱՆԻԱ.

— Բերլինի Գիտութիւնների ակադեմիան մարտ 9-ին որոնեց իւր գոտութեան 200 ամեակը. կալսը Վիլհէլմ II ճառ խօսեց, չափունելով որ նոր պաշտօններ են հաստատուում գերմանական լեզուի հետազոտութեան և ֆիզիկո-մաթեմատիկական առարկաների զարգացման համար:

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.

Մարտի 22-ին Աւստրիական կալսը Յրանց-Յովսէփ այցելեց Բերլին Վիլհէլմ II-ին. 23-ին ներկայ եղաւ Պոլուսական թագաժառանգի չափահասութեան հանդէսին:

ՅՐԱՆՍԻԱ. Յրանսիացիք զրաւեցին Խնչար ովաղիսը Տիդեկէլի երկրում (Հիւս. Աֆրիկա, Ալժիրիալի և Մարոկկօյի սահմանների մօտ), կորցնելով 2 օֆիցէր և 9 իրացանաձիգ, մի քանի հոգի էլ վիրաւորուած. արաբները կորցրին (ըստ ֆրանսիական տեղեկութեան) 600 սպանուած, 1000 վիրաւոր և 500 գերի:

— Նոր տոմարով ապրիլի 14-ին բացեց Պարիզի աշխարհանդէսը:

— Գիժոն քաղաքում բացեց Գարիբալդիի չուլարձանը, մարտի 25-ին Գարիբալդին այդ քաղաքի պաշտպանը եղաւ ֆրանսիական պատերազմի ժամանակ:

ԱՒՍՏՐԻԱ. Կրօնական շէպքերի պատճառով մարտի 7-ին կոլլեգիէ ունեցաւ Գեդգիլիգա-Օլտոէնի մօտ. Հարարի քրիստոնեայ նահանգապետը լաշթեց 2000 մահմեդականների Մենելիքը 8000 հեծեալներ շրկեց օգնութեան:

ԱՆԳՂԻԱ.

— Ուէլսի իշխանը, սրը ամուսնու հետ Կոպէնհագէն էր ուղեւորուում, Բրիւսէլի երկաթուղու կայարանում, վագոնում գտնուած միջոցին ենթարկեց սպանման փորձի, սակայն առանց որևէ վնաս կրելու:

ՃԱՆՏԱՍԻՏՆ երևացել է Աւորալիալի Սիշնէլ քաղաքում, ուր, մարտի 28-ից հեռագրի համաձայն, պաշտօնապէս չափարարուած է թէ եղել են հիւանդանալու 93 շէպք, որոնցից 23-ը մահուան ելքով:

Ճանտախորը երևացել է նաև Պարսկաստանում, այն է Ջուս. նուրեան շրջանի զանազան տեղերում (40 մլոն Գիրմանշահից շէպի հիւսիս-արևմուտք), ուր հիւանդութեան սկզբից երեք շաբաթուազ ընթացքում, ժանտախորից մեռել են 195 մարդ:

† ՂԱԶԻ ՕՍՄԱՆ ՓԱՇԱ, Պլենալի հերոսը 1877-78 թ. ուսու. տաճկական պատերազմում, վախճանեց մարտի վերջերքը:

† ԲԵՐՏՐԱՆ, Ժողէֆ, Ֆրանսիական Ակադեմիայի անդամն ու անփոփոխ քարտուղարը վախճ. մարտի 22-ին:

† ՂՈՐՂԱՆՆԱՆ Դաւիթ Չուբաբեան, վախճ. մարտի վերջերը, իրաւասու Թիֆլիսի խորհրդարանի երեք ընտրողական շրջաններում, ճախկին դատաւոր Զաքարթալի շրջանում, ճախկին ճախագահ Թիֆլիսի ուրբերի դատարանի. վարել է նաև Թիֆլիսի ազգագործական դպրոցի հոգաբարձուի պաշտօն:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թական չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ԽԱԼԱԹԵԱՆՑ, Գրիգոր, պրոֆ—Մարաբա Մծուրնացի կամ Կեղծ-Ազաթանգեղոս. համեմատական ուսումնասիրութիւն. (Հասած Բազմ. հանդիսի ԾՁ հատորէն). Վենետիկ—Ս. Ղազար, Գինը ?
- 2) ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ, Սիմէօն, բժ.—Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշտութիւնը և հաւոց թեմական հոգևոր դպրանոցների վարչակ. և ուսումն. կարգ ու կանոնի՝ դիսցիպլինայի միակերպութեան գաղափարը: Մոսկու, 1904. Ք. Բարխուդարեան. 1 ուրբի:

ՄՈՒՐՃ՝Ի ՊՈՍՍԱՐԿՂ.

Մոսկու. Պր. Մ. Շովրեան: Մի նոր նամակի մէջ Գուք, ի միջի ալոց ակնարկելով այն որ մենք տպել էինք Ձեր նամակը Մուրճի № 2-ում, հարց էք տալի թէ մեզ տվ էր տել իրաւունք հրատարակելու նամակս: Պատասխանում ենք հետեւելը. ամեն նամակ, որ վերաբերում է հրատարակի վրաչ դրած խնդրի—կարելի է հրատարակել, եթէ միայն այդ խնդիրը ըստ ինքեան հրատարակի վրաչ դնելը թույլտրելի է: Որ Ձեր գրքի ճակատին Անուշին՝ի տել Շովրեան է դրած—դա մի հանգամանք է, որ թույլտրելի է նկատողութեան առնել մամուլի մէջ. և Ձեր (նամակը) վերաբերում էր նոյն այդ խնդրին, հետեւապէս, մեզ ուղղած Ձեր նամակը կարող էինք հրատարակել: Սա մեզ համար ալտուբենական կանոն է, և այդ մասին թույլ տալ որ և է լիճարանութիւն մեր թերթի էջերում—կը նշանակէր մեր ընթերցողների հարցասիրութիւնը վերաւորելու չափ սորո ատրիճանի վրաչ դնել: Գիտենք որ այդ մասին Մշակ լրագիրը, թէև ոչ Ձեր, այլ մի ուրիշ պարոնի առիթով, և շեռ տարիներ առաջ ու ապա նոր նորից մի ալլ ղէպքի համար ն'ս մեզ հետ կամեցել է վիճել. բայց նա Մշակ է, սա՛ Մուրճ է, և եթէ Մշակը լանձին Ձեր մի համախոհ է գտնում—Գուք և նա իրարից գոհ եղէք և իրարով միմիարեւցէք: Բայց բոլորովին անկախ այդ հանգամանքից, մեզ շարմացնում է այդպիսի իրաւունքի խնդիր չարուցանելը նաև այն

պարծառով, որ աշխարհքիս ամեն խմբագրութիւն Ձեր նամակը հրատարակութեան համար նշանակեած կը նկատէր՝ թէ բովանդակութեան և թէ գրեածքի ձևի կրկին պարծառենքով, ձիշտ է, Ձեր կարծ գրութիւնը գրեած էր սովորական պոստալին թղթի վրայ. այնպէս որ մեզ մնում է միայն մտածել, որ որպագրելին ու ոչ-որպագրելին շուք որոշում էք թղթի ձևովն ու չարկութիւնովք. մի գրութիւն որ պոստի թղթի վրայ է գրեած—որպագրելի չէ, իսկ որպագրելին պէտք է ոչ-պոստի թղթի վրայ գրեած լինի... Եւ այս երկրորդ նամակում Դուք շեռ գանգատում էք թէ մենք մեր «տարօրինակ ուղղագրութեամբ շարերի առաջ փակում ենք Մուրճի էջերը», իբր ինչու և ենք գրում՝ ու-ի փոխարէն, Բայց միթէ Դա փոքր վատակ է եղել Մուրճի համար, որ նոքա, որոնք Ձեզ պէս՝ ւ-ից այնպէս են խրոչում ինչպէս եզը կարմիր գոյնից, մեզնից հեռու են կանգնել? Դուք պնդում էք թէ ուղ ագրութեան ամեն փոփոխութիւն ալ ազգերի մէջ ակադեմիաներն են վճռում: Դա չափազանցութիւն է. ակադեմիաները մեծ մասամբ միմիայն վաւերացրել են այն, ինչ որ իրենցից ստալ շարերն են ընդունել ու գործ ածել: Ի հարկէ միայն նպատակայարմար Դատածները: Եւ վերջապէս աչգ. Երբ մենք Հայերս պիտի ունենանք սեփական Ակադեմիա, նման Պարիզի, Պետերբուրգի ու ալ գիտնական ակադեմիաների? Սթէ Դրան սպասած լինէինք՝ նոն իսկ մեր ներկայիս գրական լեզուն չը պիտի գոյութիւն ունենար. աչգ. ո՞ր ակադեմիան վճիռ կալացրեց գրաբարից աշխարհաբարին անցնելը, և ո՞ր ակադեմիայի վաւերացումովն է որ 50 տարի է ինչ հայերս թող ենք տալիս մեզ նոր գրական լեզուն մշակել...

Մոսկու: Բժիշկ Սիմէօն Ծահ-Նազարեանց, Մտացանք Ձեր գրութիւնը Մուրճի № 2-ում «կոմեդիա թէ Գրական հանդէս» խորագրով մեր նկատողութեան առթիւ: Բայց նախ և առաջ Ձեր ծ. ու հասկացողութիւնը «չիտակութեան կանոններին» մասին, ինչով շեղեած կը լինենք մեր «չիտակութեան կանոններից», չը որպագրելով Ձեր գրութիւնը: Միթէ կարծում էք թէ անչիտակութիւն կը լինի մեր կողմից չը որպագրել Մուրճի մէջ թէ ինչ չուսեր ունիք Դուք և Ձեր եղբայրը այս ու այն հրատարակութիւնից: Մենք ամեննին պարտաւոր չենք Ձեր ալ և ալ նամակները որպագրել ու ոչ կլամներ անել մի հրատարակութեան համար, որը գոյութիւն ունի միմիայն Ձեր երեակայութեան մէջ, Շիտակութեան կանոնները խախտած կը լինէինք չը որպագրելով Ձեր մի գրութիւնը, ուր Դուք ցոյց կը տալիք թէ մենք Ձեր առթիւ սխալմունքի մէջ ենք ընկած, կամ սխալ հասկացած լինէինք Ձեր բացատրութիւնները և ալն: Բայց Դուք աչգ. պիտի բան չէք պնդում, ալ գալիս էք Դարձեալ հաստատանու, որ

Գուք Ձեր հրատարակութեան երկրորդ գրքի համար նիւթ չէք ունեցած տպելու Առանց նորից հաւարացնելու էլ՝ մենք արդէն հաւարացած էինք Ձեր խօսքին, և նորից հաւարացնելու կարիք չըկաւ:

Գալով Ձեր աչն խօսքին թէ մենք (==Գուք) շարունակում ենք հաւատալ, որ այսօր չե՛լած ուժերը վաղը կարող են երևան գալ, և ահա ինչու չենք գոցել («Ն.—Փ.») խմբագրութեան պոստարկը», մենք կարող ենք պնդել որ Գուք մոլորութեան մէջ էք: Ո՛վ է կասկածում թէ երբ և իցէ կարող են երևան գալ Ձեզ աշխարակցելու լսօթարութիւն ունեցող գրական քննադատներ, որպէս զի Գուք էլ ճիւղ ունենաք հատորներ հրատարակելու նոցա գրածները: Բանը աչն է որ մի զսասի-խմբագրութիւն կա, ճերկալուծս իր գոչութիւն չունեցող աշխարակիցներով, և այդ «խմբագրութիւնը» երեք տարի է սպասում է թէ երբ պիտի լուս ընկնեն այդ «աշխարակիցները», բայց և այնպէս ամեն տեղ ներկայանում էք՝ Գուք էլ, Ձեր ընկերն էլ՝ իբրև «հրատարակիչ», «խմբագիր», «խմբագրութիւն»: Ահա թէ ինչով է մի «հանդէս» շառնում կոմէդիա, և և միմիայն այդպիսի կոմէդիական գրական-քննադատական հանդէսի «խմբագրութիւնը» կարող է պնդել թէ՛ որովհետև իրեն աշխարակցողներ չըկան, ուրեմն նաև մեր գրականութիւնը չունի գրական-քննադատական ուժեր: Նոքա կան և եղել են, բայց Ձեր աշխարակիցները չեն—ահա ճշմարտութիւնը: Եթէ Եղիշէ Մադաթեան, Յովհաննէս Շահնազարեան (==Գնուհի), Կարապետ Կուսիկեան, Նիկ. Ալըալեան—իրենց քննադատական նախափորձերը Ձեզ տած լինէին ու յորա վրա աւելցրած լինէիք մի շարք թարգմանական լուսանքներ,—Գուք այսօր կունենայիք Ձեր մխիթարութեան համար մի քանի հատորիկներ հրատարակելու պատրաստի նիւթեր Բայց չէ. Գուք սպասում էք, երևի, թէ երբ Մուրճի մէջ գրական-քննադատների թիւը դասնի կը հասնի, որ նոցանից երկու-երեքը, որ և է պարճառով Ձեզ աշխարակցելու լսօթարութիւնը չաղնեն ու Գուք էլ երկրորդ գրքի չառաջարանի մէջ պարծենաք թէ նոյն իսկ Ձեր տարիներով անդործութիւնը գրական-քննադատութեան համար նպատարաւոր եղաւ, և ահա այժմ, շնորհիւ Ձեր ճրատարակութեան, քննադատներ աշխարհ տեսանք...